ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

ԱԶԲ ՎԱՐԿ 3284-ARM(SF)

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8

BDO

Հեռ.՝ +37410 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք Երևան
Վ. Սարգսյան 10,
Տարածք 114

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 19.10.2015թ. կնքված ԱԶԲ Վարկ 3284-ARM(SF) Վարկային Համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սեյսմիկ Անվտանգության Բարելավման Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 31.12.2017թ.-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 31.12.2017թ.-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն "Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):
2. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ԱԶԲ-ի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Ծրագրային ծախսերը, ներառյալ՝ վճարման հիմք հանդիսացող ցուցանիշների իրականացման հաշվետվությանը վերաբերող, ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: ՀՏԶՀ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ ներկայացված համապատասխան հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
4. Դեպոզիտային հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և ԱԶԲ-ի համապատասխան ուղեցույցների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համարե պարբերությունում:

ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՏՁՀ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏՁՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՀՄԴ-ի Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» ՀՀՀՀՄ Ստանդարտների և ԱՁԲ-ի Ծրագրերի Ֆինանսական Հաշվետվողականության և Աուդիտի Ձեռնարկի (ԱՁԲ Ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
25 հունիսի, 2018թ.

Վահագն Սահակյան
Տնօրեն

Գևել Խաչատրյան
Աուդիտոր

BDO

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սերմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում
ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Հոդվածներ	Տող.	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
		Հաշվետու տարի	Ամողական առ 31.12.2017	Հաշվետու տարի	Ամողական առ 31.12.2017	Հաշվետու տարի	Ամողական առ 31.12.2017
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ		25,241,353	-				
Ֆոնդերի աղբյուրներ	8						
ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)		728,197	26,758,153				
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում		766,443	854,317				
Ընդամենը		1,494,640	27,612,470				
Ֆոնդերի օգտագործում							
(1) Աշխատանքներ		4,247,042	4,247,042	4,299,725	4,299,725	52,684	52,684
(2) Ապրանքներ		-	44,117	2,064	46,181	2,064	2,064
(3) Խորհրդատուների ծառայություններ		70,860	379,681	97,162	405,983	26,301	26,301
(4)Գործառնական ծախսեր		184,962	322,984	197,482	335,504	12,520	12,520
(5) Հաշվարկված տոկոսներ		728,197	1,116,611	728,197	1,116,611	-	-
Ընդամենը		5,231,061	6,110,435	5,324,630	6,204,004	93,569	93,569
Արտարժույթի տարբերությունից օգուտ/(վնաս)		(49)	2,848				
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	5	21,504,883	21,504,883				

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2018թ. հունիսի 25-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Աշոտ Կիրակոսյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում
ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2017	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2017	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2017
(ա) Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում	4,317,902	4,670,840	4,398,951	4,751,889	81,049	81,049
(բ) Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում	-	-	-	-	-	-
(գ) Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում	-	-	-	-	-	-
(դ) Ծրագրի կատարման և իրականացման կարողության բարձրացում	184,962	322,984	197,482	335,504	12,520	12,520
(ե) Հաշվարկված տոկոսներ	728,197	1,116,611	728,197	1,116,611	-	-
Ընդամենը	**5,231,061**	**6,110,435**	**5,324,630**	**6,204,004**	**93,569**	**93,569**

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2018թ. հունիսի 25-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Աշոտ Կիրակոսյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում
ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Համաձայն 2015թ. հոկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև կնքված 3284-ARM(SF) վարկային համաձայնագրի՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 63,259,000 SDR (Հատուկ Փոխարկման Իրավունք) գումար:
Վարկի վճարման արժույթը՝ ԱՄՆ դոլարն է (USD).

Վարկը տրամադրվել է իրականացնելու «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր-արդյունքի վրա հիմնված վարկավորումը» (Ծրագիր, ՍԱԲԾ):
Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 22.12.2015թ.-ին:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2020թ. նոյեմբերի 30-ը, իսկ ԱԶԲ 3284-ARM(SF) վարկի ֆինանսավորման ավարտ է սահմանված 2021թ.-ի մայիսի 31-ը:

1.2 Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է աջակցել ՍԱԲԾ-ի իրականացմանը՝ մեծացնելով դրանում սեյսմիկ կայուն դպրոցական շենքերի ծածկույթը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.
(ա) Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում:
(բ) Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում:
(գ) Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում:
(դ) Ծրագրի կատարման և իրականացման կարողության բարձրացում:

1.3 Վճարման հիմք հանդիսացող ցուցանիշներ («ՎՀՑ»)

Վարկի գումարները հասանելի են հատկացման ՎՀՑ-ի համապատասխան ցուցանիշների բավարարման դեպքում: ՎՀՑ-ների իրականացման վերաբերյալ բավարարող ապացույցները պետք է ներկայացվեն ԱԶԲ-ին՝ օժանդակելու առհանման դիմումները:
Վարկային հաշվից հատկացումները կարող են կատարվել ՎՀՑ-ի համապատասխան ցուցանիշները բավարարելու դեպքում մինչև Վարկային Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 22.12.2015թ., բայց ոչ ավելի վաղ, քան 19.10.2014թ.-ը:

Վ2Տ#	Ցուցանիշներ	Ընդամենը	Նախնա-կան արդյունք	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
		SDR	SDR	SDR	SDR	SDR	SDR	SDR
Վ281	Սեյսմիկ անվտանգ դպրոցների շենքերի ծածկույթն ավելացել է	18,514,000	-		6,791,000	-	6,719,000	5,004,000
Վ282	Դպրոցական շենքերի սեյսմիկ դիմադրողա-կանությունը մեծացել է	34,382,000	2,144,000	13,224,000	-	13,438,000	-	5,576,000
Վ283	Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողու-թյունները հզորացվել են	2,573,000	-	1,072,000	-	1,001,000	-	500,000
Վ284	Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և ռիսկերի նվազեցմանն աջակցող քաղաքականու-թյունները և համակարգե-րը բարելավվել են	2,429,000	643,000	643,000	-	643,000	-	500,000
Վ285	Սեյսմիկ անվտանգության ներդրումային Ծրագրի կատարման և իրականաց-ման կարողությունները հզորացվել են	1,858,000	357,000	643,000	858,000	-	-	-
Ընդամենը		59,756,000	3,144,000	15,582,000	7,649,000	15,082,000	6,719,000	11,580,000
Հաշվարկված տոկոսներ		3,503,000	-	-	-	-	-	-
Ընդամենը		63,259,000	-	-	-	-	-	-

1.4 Բյուջե

Ծրագիրը ֆինանսավորվում է.

- ԱԶԲ 3284-ARM(SF) վարկով,
- ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ (հարկերի վճարում):

Ծախսային հոդված	ԱԶԲ 3284-ARM(SF) վարկ		ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	Ընդամենը
	SDR	USD համարժեք *	USD համարժեք**	USD
(1) Աշխատանքներ	47,208,000	66,640,007	14,759,890	81,399,897
(2) Ապրանքներ	4,183,000	5,904,829	1,307,842	7,212,671
(3) Խորհրդատուների ծառայություններ	6,680,000	9,429,657	2,088,546	11,518,203
(4)Գործառնական ծախսեր	1,685,000	2,378,589	526,826	2,905,415
(5) Ծրագրի իրականացման ընթացքում հաշվարկված տոկոսներ	3,503,000	4,958,637	-	4,958,637
Ընդամենը	**63,259,000**	**89,311,719**	**18,683,104**	**107,994,823**

(*) SDR-ով արտահայտված վարկի բյուջեի USD-ով համարժեքը հաշվարկվում է՝ USD-ով ստացված կուտակային ֆինանսավորմանը գումարելով չբաշխված ֆինանսավորման SDR-ի գումարների USD համարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ: 31.12.2017թ. դրությամբ սահմանված SDR/USD փոխարժեքը կազմել է 1 SDR=1.42413 USD, (31.12.2016 – 1.34433 USD).

(**) ՀՀ Կառավարության համաֆինանսավորման բյուջեն ճշգրտվել է՝ հիմք ընդունելով Վարկային Համաձայնագրի բյուջեի թարմացումը:

1.5 Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից:

ՀՏԶՀ-ն իրականացնում է ծրագրեր՝ ուղղված

- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից կառավարվող Հոգաբարձուների Խորհուրդը ՀՏԶՀ-ի բարձրագույն կառավարման մարմինն է:

ՀՏԶՀ-ի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են ԱՋԲ Ուղեցույցի՝ «Ծրագրերի Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտի Ձեռնարկ»-ի (մարտ 2015) համաձայն:
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամարկղային հիմունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:
ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության Կառավարության ներդրումները և ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
31.12.2016թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 483.65 դրամ:

31.12.2017թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 483.17 դրամ:

2.5 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Ցուրաքանչյուր ՎՀՏ-ի գծով ստացված միջոցների ամփոփ

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր - արդյունքի վրա հիմնված վարկավորում
ԱԶԲ վարկ 3284-ARM(SF)
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Դիմումի համար	Ամսաթիվը	ՎՀՏ կանխավճար/ (կանխավճարի մարում)	Գրանցված հատուցումներ					Հաշվարկված տոկոսներ	Ընդամենը փաստաթղթավորված	Ընդամենը վճարված
			ՎՀՏ1-Սեյսմիկ անվտանգ դպրոցների շենքերի ծածկույթն ավելացել է	ՎՀՏ2-Դպրոցական շենքերի սեյսմիկ դիմադրողականությունը մեծացել է	ՎՀՏ3-Սեյսմիկ աղետներին դիմակայելու և արձագանքելու կարողությունները հզորացվել են	ՎՀՏ4-Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և ռիսկերի նվազեցմանն աջակցող քաղաքականությունները և համակարգերը բարելավվել են	ՎՀՏ5-Սեյսմիկ անվտանգության ներդրումային Ծրագրի կատարման և իրականացման կարողությունները հզորացվել են			
	15.05.2017	-	-	-	-	-	-	339,028	339,028	339,028
	15.11.2017	-	-	-	-	-	-	389,169	389,169	389,169
Ընդամենը		-	-	-	-	-	-	728,197	728,197	728,197

4. Դեպոզիտային հաշվի հաշվետվություն

Հաշվեհամար	900000901281
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Աղամյան փ. 1,
Արժույթ	USD

	ԱՋԲ վարկ 3284-ARM(SF)
1. Սկզբնական մնացորդն առ 01.01.2017թ.	25,241,353
2. *Ավելացում.* Սկզբնական տարբերություն	-
3. ԱՋԲ ֆոնդի կանխավճար/համալրում	-
4. *Նվազեցում.* դեպոզիտային հաշվից վերադարձ ԱՋԲ-ին	-
5. Դեպոզիտային հաշվին համալրված գումարը	**25,241,353**
6. Դեպոզիտային հաշվի վերջնական մնացորդն առ 31.12.2017թ.	21,504,883
7. *Ավելացում.* վճարված ընդունելի ծախսերի գումար	3,735,712
8. *Նվազեցում.* Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են դեպոզիտային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	**25,240,595**
10. Վերջնական տարբերություն (5)-(9)	758

5. Դրամական միջոցներ

Հաշիվ	Պահվում է/ Բանկ	Արժույթ	31.12.2017 ԱՄՆ դոլար
Դեպոզիտային հաշիվ (ԱՋԲ վարկ 3284-ARM(SF))	Գանձապետարան	USD	21,504,883
			21,504,883

6. Ֆոնդեր

6.1. ԱՋԲ 3284-ARM(SF) վարկ

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2017թ. ԱՄՆ դոլար
ՎՀՏ Կանխավճար/ (կանխավճարի մարում)	-	21,949,766
ՎՀՏ վճարում	-	3,691,776
Տոկոսի վճարում	728,197	1,116,611
Ընդամենը	**728,197**	**26,758,153**
Ֆինանսավորման բյուջե՝ ընդամենը		**89,311,719**
31.12.2017թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		**30%**

6.2.22 Կառավարության համաֆինանսավորում

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2017թ. ԱՄՆ դոլար
Ներդրումներ դրամական միջոցներով	766,443	854,317
Ընդամենը	766,443	854,317
Ֆինանսավորման բյուջե՝ ընդամենը		18,683,104
31.12.2017թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		5%

7. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ Ծրագրի դեմ ներկայացված դատական հայցեր չկան:

8. ՎՀՏ-Ի իրականացման ընթացք

ՎՀՏ#	ՎՀՏ-ի նկարագրություն	Տարի	ՎՀՏ-ի նպատակ	Իրականացման ընթացքը առ 31.12. 2016	Համապատասխան հաստատման գործընթացը	Վարկի տեղաբաշխված գումարը (SDR)	Վարկի կուտակային հատկացված գումարը առ 31.12.2017 (SDR)	Հատկացման %
ՎՀՏ1	Սեյսմիկ անվտանգ դպրոցների շենքերի ծածկույթն ավելացել է	2017	Առնվազն 2.1%-ով գերազանցում է բազային ցուցանիշին (13.4%)		Ծրագրի շրջանակներում կառուցվելիք կամ ամրացվելիք 46 դպրոցների ցանկը դեռևս հաստատված չէ: Առկա է միայն 20 դպրոցների ցանկ, որով և պայմանավորված հնարավոր չի եղել ապահովել արդյունքային ցուցանիշը	18,514,000	-	-
		2019	Առնվազն 3.9% -ով գերազանցում է բազային ցուցանիշին					
		2020	Առնվազն 5.3% -ով գերազանցում է բազային ցուցանիշին					
ՎՀՏ2	Դպրոցական շենքերի սեյսմիկ դիմադրողականությունը մեծացել է	Նախնական 2015	8 առաջնային դպրոցներ ավարտված են և հաստատված					
		2016	Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 9-ով			34,382,000	-	-
		2018	Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 27-ով					
		2020	Դպրոցների քանակը գերազանցում է բազային քանակը 46-ով					
ՎՀՏ 3	Սեյսմիկ աղետներին դիմակայելու և արձագանքելու կարողությունները հզորացվել են	2016	Առնվազն 8 համայնքներ ստանում են հանրային իրազեկում	Իրականացվել և ներկայացվել է ԱԶԲ 11.11.2016թ.-ին	Հաստատվել է ԱԶԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին	2,573,000	1,072,000	42%
		2018	Առնվազն 26 համայնքներ ստանում են հանրային իրազեկում					

		2020	Առնվազն 46 համայնքներ ստանում են հանրային իրազեկում					
Վ234	Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարումը և ռիսկերի նվազեցմանն աջակցող քաղաքականությունները և համակարգերը բարելավվել են	Նախնական 2015	ՍԱԲԿ-ն հաստատված է	Իրականացվել և ներկայացվել է ԱԶԲ 11.11.2016թ.-ին	Հաստատվել է ԱԶԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին	2,429,000	643,000	26%
		2016	Շինարարության նորմերը համապատասխանեցվել են միջազգային ստանդարտներին	Սեյսմակայուն շինարարության ուղեցույցները մշակվել և հաստատվել են ՀՀ ՊԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից, իսկ սեսմակայուն շինարարական նորմերի վերանայման աշխատանքները չեն մեկնարկել: Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է որպեսզի հաստատվի 1:500000 սեյսմիկ վտանգների քարտեզը, որը դեռես պատրաստ չէ:				
		2018	Ազգային սեյսմիկ վտանգի հավանականային քարտեզը թարմացվել է					
Վ235	Սեյսմիկ անվտանգության ներդրումային Ծրագրի կատարման և իրականացման կարողությունները հզորացվել են	Նախնական 2015	Առնվազն 11 լրացուցիչ աշխատակից ներգրավվել է ՀՏՁՀ-ում՝ Ծրագրի իրականացման համար	Իրականացվել և ներկայացվել է ԱԶԲ 11.11.2016թ.-ին	Հաստատվել է ԱԶԲ-ի կողմից 29.11.2016թ.-ին	1,858,000	1,000,000	54%
		2016	Մրցութային փաստաթղթերի նմուշները պատրաստված են, ՀՏՁՀ -ի ղեկավար ձեռնարկը թարմացված է, Ծրագրի մոնիթորինգի և գնահատման համակարգերը հաստատված են	Պատրաստվել է ՀՏՁՀ-ի կողմից և ներկայացվել է ԱԶԲ 2016թ. նոյեմբերին				
		2017	Ծրագրի իրականացման համար առնվազն 30 աշխակիցներ, որոնցից առնվազն 40%-ը կանայք են		2017թ. Ընթացքում վերապատրաստում են անցել 14 աշխատող (որից 8-ը կին)			
Ընդամենը						59,756,000	2,715,000	5%